

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ԴԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ

SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 2(5), 2020

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

«Գիտական Արցախ» պարբերականը պետք է www.elibrary.ru կայքում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

The «Scientific Artsakh» journal is posted on www.elibrary.ru website.

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных

Высшим аттестационным комитетом Республики Армения (BAK RA).

Журнал «Научный Арцах» размещен на сайте www.elibrary.ru.

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Լախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝

Լենա ԱՄՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր (**Տառագոնա, Իսպանիա**)

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ

Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ

Զուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Վլադիսլավ ԳՐՈՒՉՂԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Կոստորմա, ՌԴ**)

Գևորգ ԴՎՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արման ԵՂԻՉԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ

Սեյրան ՉԱԶԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մարել ժԵՅՍՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Օլտին, Լեհաստան**)

Նատայա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Մինսկ, Բելառուս**)

Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ**)

Օտտո ԼՈՒԻՏԵՐՅԱՆՂՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Համբուրգ, Գերմանիա**)

Ռուզաննա ՀԱՎՈՔՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Իրինա ՀԱՅՈՒԿ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Լվով, Ուկրաինա**)

Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մուշեղ ՀՈՎՍԵՓՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գագիկ ԴԱՉԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Էդիկ ՄԻՆԱՅՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Դոնի Ռոստով, ՌԴ**)

Գարիկ ԶԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Տիգրան ԶՈՉԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 2(5), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2020, 272 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 2-րդ (5-րդ) համարում տեղ են գտել հասարակական գիտությունների արդի հիմնախնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը, Արցախի Հանրապետությունը, Բելառուսը, Դոնեցկի ժողովրդական Հանրապետությունը, Չինաստանը և Ռուսաստանի Դաշնությունը ներկայացնող մոտ երեք տասնյակ անվանի ու երիտասարդ գիտնականների աշխատանքները:

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the «Scientific Artsakh» Journal

EDITORIAL COUNCIL

Chairman: **Aram SIMONYAN**, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: **Avetik HARUTYUNYAN**, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: **Tehmina MARUTYAN**, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Lena ASRYAN, Doctor of History (**Tarragona, Spain**)
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Associate Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (**Kostroma, Russia**)
Julietta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Irina HAYUK, Ph.D in Philosophy, Associate Professor (**Lviv, Ukraine**)
Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Natalia KOVKEL, Ph.D in Law, Associate Professor (**Minsk, Belarus**)
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (**Moscow, Russia**)
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (**Hamburg, Germany**)
Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (**Rostov-on-Don, Russia**)
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Associate Professor
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (**Olsztyn, Poland**)

Scientific Artsakh, № 2(5), 2020, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2020, 272 pages.

The second (5th) issue of «Scientific Artsakh» journal 2020 comprises the scientific works of approximately 30 prominent and young scientists from Armenia, Artsakh, Belarus, China, Donetsk People's Republic and Russia on the topical issues of social sciences.

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук (Таррагона, Испания)
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, доцент
Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент (Львов, Украина)
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
Джюльетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, доцент
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент (Минск, Беларусь)
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 2(5), 2020, Ереван, Издательство «АРЦАХ», 2020, 272 страницы.

Во втором (5-ом) номере 2020 г. журнала «Научный Арцах» нашли место научные работы около 30 выдающихся и молодых ученых из Армении, Арцаха, Беларуси, Донецкой Народной Республики, Китая и России, в которых исследуются актуальные вопросы общественных наук.

Աննա Միկոյան. Չարեհ Որբունու երկերի անձնանունների պոետիկան..... 147
Anna Mikoyan. The Poetics of Proper Names in Z. Vorbouni's Literary Works
Анна Микоян. Поэтика собственных имен в литературных произведениях З. Ворбуни

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, JOURNALISM, ЖУРНАЛИСТИКА

Արտյոմ Դերյագին. Հասարակական-քաղաքական հեռուստատեսության լսարանի պահանջմունքների ուսումնասիրությունը Շանթ, Արմենիա և Հ1 հեռուստաալիքներում..... 162
Artyom Deryagin. Research of the Audience Requirements of Public and Political TV on the Example of Most Acknowledged Armenian TV Channels.
Артём Дерягин. Исследование требований аудитории общественно-политического телевидения на примере рейтинговых армянских телеканалов

ԱՐԿԵՍ, ИСКУССТВО, ART

Անի Սարգսյան. Չինական արվեստի աշխարհը կորոնավիրուսային համաճարակի արվեստի համատեքստում..... 173
Ani Margaryan. Chinese Art World in the Context of the Coronavirus Pandemic Art
Ани Маргарян. Китайский мир искусства в контексте искусства пандемии коронавируса

Նաիրա Մելիքյան. Կոնստանտին Օրբելյանի սիմֆոնիան..... 187
Naira Melikyan. Konstantin Orbelian's Symphony
Наира Меликян. Симфония Константина Орбеляна

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА

Սարիամ Ոսկանյան. Աղքատությունը և եկամուտների անհավասարությունը Հայաստանում..... 196
Mariam Voskanyan. Poverty and Inequality of Income in Armenia
Мариам Восканян. Бедность и неравенство доходов в Армении

Ֆլորա Սողոյան. Ինովացիոն քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղիները զարգացող երկրներում (ՀՀ օրինակով)..... 203
Flora Soghoyan. Ways to Increase Innovation Policy Efficiency in Developing Countries (on the Example of RA)
Флора Согоян. Пути повышения эффективности инновационной политики в развивающихся странах (на примере РА)

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, PHILOSOPHY, ФИЛОСОФИЯ

Գևորգ Հակոբյան. Ճանաչման հիմնահարցը գիտական իմացության և իրավունքի ու քաղաքականության ոլորտներում..... 210
Gevorg Hakobyan. The Problem of Recognition in The Sphere of Scientific Knowledge, Law and Politics
Геворг Акопян. Проблема признания в сфере научного знания, права и политики

ՀՏԴ 82.09

ԱՆՆԱ ՄԻԿՈՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
հայ բանասիրության ֆակուլտետի
հայ նորագույն գրականության ամբիոնի ասպիրանտ
«Զանգակ» հրատարակչության մեթոդիստ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն,
mikoyan.anna@mail.ru*

Հոդվածի նպատակն է առաջ քաշել այն մոտեցումը, ըստ որի՝ ֆրանսահայ գրող Չարեհ Որբունու պոետիկայի քննության և առհասարակ նրա երկերի գրականագիտական ընթերցման համար առանցքային է գրողի կերտած կերպարների անունների և ազգանունների ուսումնասիրությունը: Մեր խնդիրն է 2. Որբունու գեղարվեստական կերպարների անձնանունների օգնությամբ բացահայտել հեղինակային ասեյիքը, որը հմտորեն գաղտնագրված է կերպարների անուն-ազգանուններում:

Հետապոտության իրականացման ընթացքում հիմնականում կիրառվել է նշանագիտական մեթոդը, առանձին դեպքերում այն կուզորդվել է գրական տեքստի ընթերցման հերմենևտիկական-հոգեվերլուծական մոտեցումներով:

Հետապոտության արդյունքում հանգել ենք այն ելրակացության, որ Չարեհ Որբունու կերպարների անունները պատահաբար չեն ընտրված. դրանք կամ համընկնում են կերպարների նախատիպերի անուն-ազգանունների հետ, կամ խորհրդանշական են տվյալ կերպարի կամ ստեղծագործության համար: Վերջին տարբերակը գերակշռում է գրողի երկերում: Կան հերոսի ծագումը, սեռային պատկանելությունը, կարգավիճակը, ազգությունը, բնավորությունը, արժեհամակարգը, գործունեությունը, հավվադեպ՝ նաև արտաքինը խորհրդանշող անուն-ազգանուններ, որոնցից յուրաքանչյուրը գեղարվեստական բանալի է՝ թափանցելու ստեղծագործության խորքը:

Հիմնաբառեր՝ սիյունքահայ գրականություն, 2. Որբունի, պոետիկա, նշանագիտություն, գեղարվեստական կերպարների անձնանուններ, խորհրդանիշներ, նախատիպեր:

Ֆրանսահայ գրող Չարեհ Որբունու իրական ազգանունը Էոքսյուզյան է (թուրք. նշ. Է «որբ»), որը ժամանակին գրողի ուսուցիչ Շ. Պերպերյանը, թարգմանելով հայերեն, առաջադրել է որպես իր ստեղծագործող աշակերտի գրական կեղծանուն³³¹: Ճակատագրի հեգնանքով Որբունին Եղեռնի տարիներին որբացավ, և ամբողջ կյանքում իր երկերում արտացոլեց ցեղասպանության ժամանակ որբացած սերնդի ճակատագիրն ու հոգեբանությունը: Ուշագրավ է, որ նրա՝ կոտորածի ժամանակ զոհված հոր անունը **Մարտիրոս** է: Ըստ ամենայնի, իր անձնական կենսափորձից ելնելով՝ հեղինակը

* Հոդվածը ներկայացվել է 13.03.2020թ., գրախոսվել՝ 23.03.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2020թ.:

³³¹ Միաձայն գրոյց Չարեհ Որբունիի հետ // «Բագին», Պեյրուք, 1980, թ. 10, էջ 58:

հավատացած է եղել, որ մարդկային անունները թելադրող են, ճակատագրորեն որոշիչ: Օրինակ՝ հեղինակի «Չի թն է կարողություն» վեպում **Մանուկ** անունով հերոսը կարծում է, որ իր մայրը նախապես մարգարեաբար կանխագուշակել է, որ որդին ամբողջ կյանքում մանուկ է մնալու, ուստի ժամանակին խիստ հատկանշական անուն է ընտրել որդու համար³³²: Ահա այս մտայնությամբ Որբունին իր հերոսների անուններն այնպես է ընտրել, որ դրանք իր և իր կերտած կերպարների փոխարեն խոսեն ու ներգործեն:

Հեղինակը վաղ շրջանի օրագրային նշումներից մեկում խոստովանում է, որ **Լիլի** և **Լուլու** անունով կանանցից մշտապես վտանգ է զգացել³³³, բայց ուշագրավ է, որ հետագայում ամուսնացել է Էլիզաբեթ անունով կնոջ հետ, որին մտերիմները Լիլի էին կոչում: Անվան պատճառով մարդկանց հանդեպ կանխակալ վերաբերմունք ունենալու մտայնությունը հատուկ է նաև գրողի ստեղծած կերպաներին: Օրինակ՝ «Հալածուածները» վիպաշարի գլխավոր հերոս Մինասը խոստովանում է, որ **Արշալույս Աղվորիկյանին** տակավին չտեսած՝ նրա անուն-ազգանվան ներգործությամբ սիրահարվել է աղջկան, քանի որ մտածել է, որ նա և՛ վեհաշուք արտաքինով, և՛ ազնիվ հոգով օրհորդ է: Բայց իրեն հակասելով՝ հետո հիշում է, որ արշալուսային գեղեցկությամբ ևս մեկ տիկնոջ է ճանաչում, որի ազգանունը բացարձակ համաատասիան չէ տիկնոջ կերպարին. տիկնոջ ազգանունը **Լըբեռֆ** է, որը թարգմանաբար նշանակում է «**տավարի միս**»³³⁴: Այնուամենայնիվ, Որբունու գիտակցության մեջ այնքան արմատացած է եղել անունների մոգական ուժի վերաբերյալ հավատը, որ իր կերպարներից մեկն անգամ կարծում է, թե մեռած կնոջ անունը գրելով՝ կարող է նրան կենդանության բերել³³⁵:

Զննելով Որբունու երկերի անձնանունների պոետիկան³³⁶՝ նկատել ենք, որ վերջինս կամ իր կերպարներին նախատիպերի իրական անուններով է ներկայացնում, կամ նրանց համար ընտրում է խորհրդանշական անուններ: Կարծում ենք, որ գրողը խորհրդանշական անունների ընտրության հարցում որոշակիորեն ազդվել է նաև իր սիրելի Ֆ. Դոստոևսկուց, որի երկերի անձնանունների պոետիկան մշտապես եղել է գրականագետների ուշադրության կենտրոնում³³⁷: Ուստի Որբունու պոետիկայի ուսումնասիրության մեջ կերպարների անձնանունների նշանագիտական քննությունն իսկապես անհրաժեշտ և անշրջանցելի է:

Այժմ դիտարկենք Որբունու արձակում հանդիպող անձնանունների պոետիկան հետևյալ դասակարգմամբ՝ **խորհրդանշական անուն-ազգանուններ, նախատիպերի անուն-ազգանունների հետ համընկնող գեղարվեստական անուն-ազգանուններ:**

³³² Տե՛ս **Որբունի 2.**, Չի թն է կարողություն // «Կամ», Պեյրուֆ, 1982, թ. 2, էջ 56:

³³³ Տե՛ս **Որբունի 2.**, Գրպանի տետրակներ // «Սենք» Բ Փուտիզ, 1931, էջ 74:

³³⁴ Տե՛ս **Որբունի 2.**, Հալածուածները. Թեկնածուն, Պեյրուֆ, «Սեան» տպարան., 1967, էջ

16:

³³⁵ Տե՛ս **Որբունի 2.**, Չի թն է կարողություն, էջ 70:

³³⁶ Տե՛ս գեղարվեստական երկերի անձնանունների պոետիկայի վերաբերյալ սույն տեսական անդրադարձը. տե՛ս **Տուցա Ա.**, Интерпретация онима в поэтическом тексте: оним – прецедентное имя – образ-символ, Наукові праці Кам'янець-Подільського національного університету імені Івана Огієнка, Філологічні науки, 2015, випуск 38, с. 286-289:

³³⁷ Ֆ. Դոստոևսկու երկերի անձնանունների պոետիկայի մասին տե՛ս **Բեմ Ա.**, Личные имена у Достоевского, Сборник в честь на проф. Л. Милетичь, София, 1933, С. 409-434. **Альтман М. С.** Достоевский по векам имен, Саратов, Издательство Саратовского университета, 1975. **Коган Г.**, Загадочное имя Свидригайлова: («Преступление и наказание» и периодическая печать 1860-х годов) // Известия Академии наук СССР, Серия литературы и языка, М., Наука, 1981. Т. 40. № 5. С. 426-435. **Белов С.** Имена и фамилии у Достоевского, «Телескоп», № 6 (108), 2014, С. 42-43. **Brody E.**, Meaning and Symbolism in the Names of Dostoevsky's Crime and Punishment and The Idiot, Names, 1979, Volume 27, Issue 2, p. 117-140.

1. Խորհրդանշական անուն-ազգանուններ

1.1. Աստվածաշնչյան անուններ: «Հալածուածները» վիպաշարի առաջին իսկ վեպում՝ «Փորձում»³³⁸, պատումը գլխավոր կերպարի դիտանկյունից է ներկայացվում, և գործող անձինք հիմնականում անանուն են: Բայց հետաքրքրական է, որ երկրորդական որոշ կերպարներ հանդես են գալիս **անուններով, ընդ որում՝ աստվածաշնչյան** (օր.՝ Թովմա, Կիրակոս, Սանդորո): Առհասարակ վեպում մարդկային կյանքը ներկայացվում է քառասյին ընթացքի մեջ, իսկ սուրբգրային անունների առկայությունն իսկապես սուր հակադրություն է ստեղծում: Սկսած վիպաշարի երկրորդ հատորից՝ գլխավոր հերոսը նույնպես ձեռք է բերում աստվածաշնչյան անուն՝ **«Մինաս»**: Սակայն նախքան վիպաշարի երկրորդ հատորը ստեղծելը Որբունին վիպաշարի մեջ չմտնող «Եվ եղև մարդ»³³⁹ վեպն է գրում, որի գլխավոր կերպար **Թոմասն** ասես վիպաշարի Մինասի կրկնակը լինի: Նրանք նույնանուն են ճակատագրով, փոփոխական էությունը և մարդկանց հետ ունեցած հարաբերություններով: Հարցազրույցներից մեկում Որբունին հաստատում է, որ Մինասն ու Թոմասը նույնական են, դրա համար էլ նրանց անուններն ինքնաբերաբար համահունչ են ընտրվել³⁴⁰: Սակայն մեր կարծիքով Թոմաս անվան ընտրությունը կապված է **Թովմա** առաքայլի անվան հետ: **Թովմա նշանակում է «երկվորյակ»**³⁴¹, իսկ վիպական Թոմասը դրսևորում է հոգեկան երկվորություն, հակասական է, տատանվող ու կասկածամիտ: Բացի այդ, Որբունու սիրելի հեղինակներ Մորիս Բլանշոն և Ջյուլիա Համսունն էլ ստեղծել են նույնանուն ու նույնաբնույթ կերպարներ: Մորիս Բլանշոյի «Մուլթ Թովման»³⁴² վիպակի համանուն կերպարը և Ջյուլիա Համսունի «Պան» վեպի³⁴³ Թոմաս Գլանը ևս դրսևորում են երկվորություն, ուստի նրանց անվան ընտրությունն էլ է կապվում համանուն առաքայլի հետ:

Որբունին մի առիթով խոստովանել է իր վաղ շրջանի ստեղծագործությունների վրա համսունյան ազդեցության մասին³⁴⁴: «Փորձ» վեպի և Ջյուլիա Համսունի «Սով» վեպի³⁴⁵ ընդհանրություններն ակնհայտ են: Հարկ է նկատել նաև, որ Համսունի «Սով» վեպի կերպարը Որբունու «Փորձ» վեպի կերպարի պես անանուն է, սակայն հաջորդող վեպում («Պան» վեպը «Սով» վեպի շարունակությունն է, ինչպես որ «Հալածուածները» վիպաշարի մնացյալ վեպերը՝ առաջին վեպի՝ «Փորձ»-ի շարունակությունը) անանուն կերպարը անվանվում է Թոմաս, ինչպես որ Որբունու կերպարը՝ Մինաս:

Աստվածաշնչյան անուն է նաև «Սիզիփոսեան տեսիլք» նորավեպի³⁴⁶ կերպարի՝ **Հակոբի անունը**: Հրեական «Հակոբ» (Jacob) անունը, ըստ Սուրբ Գրքի, նշանակում է **«խաբող»** կամ **«կրնկակոխ հետևող, կրունկից բռնող, վրա հասնող»**: Ըստ Հին Կտակարանի՝ Հակոբը ժամանակից շուտ է ծնվել, որպեսզի երկվորյակ եղբորը հասնի և կրունկից բռնի (հատ. 2): Իսկ նորավեպի կերպարը գնացքը բաց թողնելուց հետո որոշում է անձրևի տակ համառորեն վազել՝ գնացքը բռնելու համար մյուս գյուղի

³³⁸ Տե՛ս **Որբունի 2.**, Եվ եղև մարդ, Երևան, «Հայաստան» հրատ., 1967, էջ 13-95:

³³⁹ Նույն տեղում, էջ 99-225:

³⁴⁰ Տե՛ս «Չարեհ Որբունիի հետ» հարցազրույցը // «Սփիւռք», Պեյրուս, 1966, սեպտեմբեր 29, թ. 38, էջ 11:

³⁴¹ Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, Եր., Պետ. համալս. հրատ., 1944, հտ. 2: Հետայսու սույն բառարանին կտրվեն հղումները փակագծով, որում կնշվի համապատասխան հատորը:

³⁴² Տե՛ս **Blanchot M.**, Thomas the Obscure, New York, State Hill Press, 1995:

³⁴³ Տե՛ս **Համսուն Կ.**, Պան, Երևան, «Հայաստան» հրատ., 1971:

³⁴⁴ Տե՛ս **Որբունի 2.**, Նամակներ կնոջս Երևանեն // «Աշխարհ», Փարիզ, 1975, դեկտ. 27, թ. 927, էջ 2:

³⁴⁵ Տե՛ս **Համսուն Զ.**, Սով, Երևան, «Ապոլոն» հրատ, 1995:

³⁴⁶ Տե՛ս **Որբունի 2.**, Անձրեւտու օրեր, Փարիզ, «Ամսօրեակ» հրատ., 1958, էջ 125-130:

կայարան հասնելու որոշմամբ: Թեև հասնելն անհնար էր, Յակոբը հայտարարում է, որ կարևորը վազելն է, ոչ թե հասնելը: Պարզ է, որ Որբունին կերպարին կոչել է «Յակոբ»՝ վազելու և գնացքը բռնելու գործողության համար:

Առհասարակ Որբունու ստեղծագործություններում մի շարք անուններ հեղինակն այնպես է ընտրել, որ դրանք մատնանշեն տվյալ **կերպարի հետ կապված որևէ դիպված, հատկանշական գործողություն**: Օրինակ՝ վիպաշարի Վահագը պատերազմի աստծո անունով է կոչվել, քանի որ «Թեկնածուն» վեպում նրա գլխավոր գործողությունը թրթասպանությունն է: Մեկ այլ հատկանշական օրինակ «Կարապին երգը» պատմվածքի³⁴⁷ պատերազմում զինվոր **Գաթունը** որոշում է չպայթարել, ընթացող կռիվը իրենը չի համարում. նա ասես օտար է իր հայրենիքում: «Գաթուն» անունը ամենայն հավանականությամբ գերմանական **«Գաստոն» (Gaston)** անունն է, որի հիմքում գերմ. **«gast»**-հյուր արմատն է³⁴⁸, որն իսկապես հատկանշական է այս պատմվածքի կերպարի ինքնադրսևորմանը:

1.2. Գործողություն կամ հատկանիշ մատնանշող անուններ: Առանձին խումբ են կազմում այն անունները, որոնք ընտրված են՝ **մատնանշելու կերպարի էությունը, բնավորության ամենահատկանշական գիծը**: Օրինակ՝ «Չի քո է կարողություն» վեպի Մանուկը, ինչպես նշվեց, կարծում է, որ իր անունը ուղիղ համեմատական է իր էությանը: Եվ, իսկապես, Մանուկը, հասուն տարիքի տղամարդ լինելով, մանկան պես կապված էր մորը, նախածեռնող չէր, անձնական կյանքում անհաջողակ էր, ինքն իրեն «մակաբույծ» էր համարում թե՛ հոգեբանական, թե՛ սոցիալական առումով: Վ. Շուշանյանն էլ ստեղծել է **Չավեն Մանկունի** անունով նմանատիպ կերպար, որն ինքնությամբ նույնանում է հեղինակի հետ³⁴⁹: Ուշագրավ է, որ Որբունին էլ մի առիթով Գ. Մահարուն խոստովանել է, որ իր մեջ մանուկ է ապրում և ինքն իրեն այդպիսին է համարում. «Մեծ հայրիկս զմայլելի գինով մըն էր, ինծի պես մանկական հոգիի տեր (գիտե՞ս, որ քուկին ալ բարեկամդ մանկական և միամիտ մեկն է)»³⁵⁰:

«Թեկնածուն» վեպում կա **Աբգար** անունով կաղ կերպար, որի անունը, օրինակ, ընտրվել է՝ ընդգծելու **թե՛ հերոսի հոգեկան, թե՛ մարմնական թերությունները**: Իզմիրից Ֆրանսիա գաղթած այս կերպարը կաղ է, որովհետև մայրն ու հայրը մանուկ ժամանակ այնքան էին ծեծել նրան, որ մի ոտքը հաշմվել էր: Հաշմված էր ոչ միայն մարմինը, այլև հոգին, քանի որ ծայրահեղ մարդատյաց էր, սադիստական հակումներ էր դրսևորում, որոնցով արտամղում էր իր մեջ կուտակված մանկական քենն ու անձնական խռովքը: Աբգարի նախատիպը մի իզմիրցի կաղ երիտասարդ է, որը Որբունուն Մարսելից Փարիզ տեղափոխվելիս դիմավորել էր և օգնել, որ աշխատանքի անցնի հենց այն պանդոկում, որում պատկերվում են «Թեկնածուն» երկի գործողությունները: Բայց ուշագրավ է, որ այդ դիպվածից մոտավորապես քսանհինգ տարի հետո Որբունին իր օրագրում կաղի մասին նշում է, որ նրա անունը ոչ մի կերպ չի կարողանում մտաբերել³⁵¹: Ուստի վեպում կաղի կերպարը ստեղծելով՝ անվանում է նրան Աբգար, որն, ըստ հայագետ Ա. Կարիերի ստուգաբանության, նշանակում է «կաղ»³⁵²:

³⁴⁷ Տե՛ս **Որբունի 2.**, Կարապին երգը // «Անդաստան», Փարիզ, թ. 13, էջ 49-61:

³⁴⁸ Տե՛ս **Kohlheim R., Kohlheim V.**, Das grobe vornamen-lexikon, Berlin, Duden, 2016:

³⁴⁹ Տե՛ս **Շուշանյան Շ.**, Չավեն Մանկունիի սերերը // «Նոր-Դար», Երևան, 1996, թ. 1-2, էջ 8-56:

³⁵⁰ **Որբունի 2.**, Կենսագրական շաղակրատություն Գ. Մահարիի հետ // «Սովետական գրականություն», թ. 8, էջ 130:

³⁵¹ Տե՛ս **Որբունի 2.**, Օրագրի էջեր // «Շիրակ», Պեյրուֆ, 1982, թ. 9, էջ 30:

³⁵² Տե՛ս Կարիեր Ա., Աբգարու զրոյցը Մովսես Խորենացու պատմութեան մեջ, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1987, էջ 64:

1.3. Գաղափար արտահայտող անուններ: Որքանու արձակում կան վիպական այնպիսի կերպարներ, որոնց հեղինակն առարկայական գծերով չի օժտել. Նրանք ասես ուրվականներ կամ սովերներ լինեն, որոնք ստեղծվել են իրենց կերպարով **որևէ գաղափար առարկայացնելու համար:** Նրանց **անուններն էլ ուղղակիորեն արտահայտում են այն գաղափարը, որը մարմնանում է նրանց կերպարում:** Այդպիսիք են՝ «Ասֆալթը» վեպի³⁵³ **Չարությունը**, «Թեկնածուն» վեպի **Արշալույսը** և «Դագաղագործը որպես մեռելներու համարատու» պատմվածքի³⁵⁴ **Պասկալը:** **Չարությունը** հայտնվում է այն պահին, երբ գլխավոր կերպար Մինասը կնոջ՝ Նիթոլի մահից հետո վերադառնում է տպարան՝ աշխատանքի: Չարությունն այնքան խորհրդավոր կերպար է, որ ասես անկյութական լինի, խոսելիս ձայնը բերանից չի դուրս գալիս: Բացի այդ, Մինասը խոստովանում է, որ իր վերադարձից հետո ասես առաջին անգամ է տեսնում ու ճանաչում Չարությունին, թեև վաղուց են իրար հետ աշխատում: Չարությունը նրան հայտնում է Խաչիկ Մանուկյանի՝ Մինասի սիրելի ընկերոջ մահվան մասին: Պատահական չէ, որ վեպում Չարությունը հայտնվում է այն ժամանակ, երբ հերոսը բախվում է երկու թանկագին մարդկանց մահվան փաստին: Կարծում ենք, որ Չարությունն իր անունով ու գործառնությունով մարմնավորում է Մինասի հոգում իր մեռած սիրելիների վերածնության հույսը: Չարությունի մարմնավորած գաղափարը վերջնականորեն հաստատվում է Զրիստոսի հետ անուղղակի զուգորդման մեջ. ասվում է, որ այնպիսի կեցվածքով է քայլում փողոցում, ասես օվկիպոսի վրայով քայլի³⁵⁵:

Չարության գաղափարի մարմնացումն է նաև վերոնշյալ պատմվածքի **Պասկալը**, որի անունը լատ. «Paschalis» (Չատկի տոն)³⁵⁶ անվան ֆրանսերեն տարբերակն է (հմմտ. ռուս. «Пасха»), որը Զրիստոսի հարության տոնն է և սովորաբար նշվում է ապրիլին: Պասկալը հմուտ դագաղագործ է և գիտի, որ ապրիլին ո՛չ հարուստներն են մեռնում, ո՛չ էլ աղքատները: Բոլորը ուզում են ապրել, քանի որ ապրիլը ապրելու ամիս է: Նրա կարծիքով ապրելը մեռելուն պատրաստվելու գործընթաց է, այսինքն՝ մեկի վերջը մյուսի սկզբի մեջ է, իսկ դա հանգեցնում է վերածնության գաղափարին:

Նոր սկզբի գաղափարը կա նաև «Թեկնածուն» վեպի **Արշալույսի** կերպարում: Ի սկզբանե ներկայացվում է գլխավոր հերոսի սևեռվածությունը Արշալույսի անվան վրա. Նրան չտեսած՝ մտածում է, որ աղջիկը պետք է իր անվան նման ազնիվ եուրյուն ունենա և չնայած ամուսնացած լինելուն՝ լինի անաղարտ, դեռատի օրիորդ: Եվ իսկապես Արշալույսը Մինասի ընկերոջ հետ ամուսնացել էր, բայց ամուսինը՝ Վահագնը, տակավին կնոջ հետ չկենակցած, ինքնասպան էր եղել: Դրանից հետո Արշալույսը ցանկանում էր Մինասի հետ միություն կազմել, սակայն վերջինիս կյանքում կար կին, որն արդեն փոխել էր նրա կյանքը: Ուստի Մինասը որոշում է, որ Արշալույսն իր կաղ ընկերոջ բովանդակագուրկ կյանքում կարող է բարերար դեր խաղալ: Անարգված մանկությամբ կաղի կերպարին արդեն անդրադարձել ենք՝ ընդգծելով նրա հոգեխեղման հիմնապատճառները: Բայց Արշալույսի հետ միության լուծումը հասկանալու համար հարկ է դիտարկել Աբգարի կերպարի հետ կապված վիպական որոշ մանրամասներ: Նախքան Արշալույսի հայտնվելը, կյանքի հանդեպ չարացած Աբգարը այգաբացին երկար կանգնում էր կամուրջի վրա և դիտում նոր արթնացող աշխարհը: Նրա ապրումները հետևյալ կերպ են նկարագրվում. «Ամբողջ զգայարաններովը կը վայելէր փողոցներուն անսովոր տեսարանը ճերմըկող գիշերուան մեջ՝ որ օրուան կուսութիւնն է: Իրաւ որ կուսութիւնը պղծողի ցան ու վայելքը կ'ունենար»³⁵⁷: Առհասարակ մեր աչքից չի վրիպել,

³⁵³ Տե՛ս **Որբունի Զ.**, Չալածուածները. Ասֆալթը, «Սեան» տպարան, Իսթանպուլ, 1972:

³⁵⁴ Տե՛ս **Որբունի Զ.**, Անձրեւոտ օրեր, էջ 131-140:

³⁵⁵ Տե՛ս **Որբունի Զ.**, Չալածուածները. Ասֆալթը, էջ 237:

³⁵⁶ Տե՛ս **Hanks P., Hodges F.**, A dictionary of first names, Oxford University Press, 2003:

³⁵⁷ **Որբունի Զ.**, Չալածուածները. Թեկնածուն, էջ 103:

որ հատկապես առավոտյան Աբգարը կերպարանափոխվում էր՝ դառնալով ավելի մեղմ, մարդամոտ ու քաղցրախոս³⁵⁸: Իսկ մի դիպվածով Աբգարի ըմբոստ ու կոպիտ դեմքին հայտնված ծալիտը համեմատվում է **ամռան արշալույսների** հետ³⁵⁹, որը վերջնականորեն հաստատում է, որ Արշալույսի հետ միությանը Աբգարի հոգու մաքրագործման, փրկության ու վերածնության խորհուրդն է բովանդակում:

1.4. Կույս կերպարների անուններ: Նկատելի է, որ Որբունին իր երկերում **չամուսնացած հայ աղջիկների անունների մի մասն այնպես է ընտրել, որ դրանցում լինի ակնարկ նրանց անաղարտության, մաքրության մասին**, ինչպես, օրինակ, **Արշալույսի** պարագայում, քանի որ անունը հուշում էր, որ չնայած Վահագնի հետ չստացված ամուսնությանը՝ մնացել էր նույն անաղարտ օրիորդը: Կամ, օրինակ, դիտարկենք «Եվ եղև մարդ» վեպի **Սրբուհու** և նրա ընկերուհի **Վերծինի** (Verginia) անունները: Սրբուհու անվան իմաստը հասկանալի է, իսկ ընկերուհու անունը ծագում է լատ. «virgo»-**կույս արմատից** (հատ. Ե): Սակայն այս կերպարների կողքին կա նաև **Ազնիվ** անունով հարսնացու («Սովորական օր մը»), որը աչքաբաց ու «պտտող» աղջիկ է, բայց նրա անունը ընտրված է՝ հակառակ իմաստով ընդգծելու աղջկա անպատշաճ ու անազնիվ վարքուբարքը:

Որբունու՝ կյանքի վերջին տարիներին գրված «Զի քո է կարողութիւն» վեպում էլ **Անահիտ** անունով օրիորդ կա: Ելնելով սույն վեպում հեղինակի՝ անունների հետ կապված որոշ ակնհայտ վրիպումներից և անունների ընտրության նրա հիմնական սկզբունքներից՝ կարծում ենք, որ Անահիտը, որպես չամուսնացած աղջիկ, պետք է կրեր իր մոր՝ **Յոնիսիմեի** անունը, որն ակամայից զուգորդվում է համանուն կույսի հետ, իսկ մոր՝ մայրության և գեղեցկության աստվածուհի Անահիտի անունով կոչվելը առավել տրամաբանական կլիներ: Յնարավոր է, որ հեղինակը այս հարցում էլ վրիպել է, ինչպես որ նույն վեպի այլ հերոսների անունների հարցում: Ընդ որում, վերոնշյալ օրիորդներից Սրբուհու մոր անունը **Աստղիկ** է: Մեր կարծիքով, գրողն ըստ ամենայնի մշակել է որոշակի օրինաչափություն՝ **հարսնացու աղջիկների անունները սրբերի հետ զուգորդելով**, իսկ **նրանց մայրերինը՝ աստվածուհիների**, սակայն մի տեղ շփոթել է անունները՝ իր որդեգրած օրինաչափությունը խախտելով:

Որբունու երկերում **չամուսնացած աղջիկների մյուս մասի անունները ծաղկանուններ են**: Առհասարակ, ծաղիկը խորհրդանշում է հարսնացու, կույս աղջիկ³⁶⁰: Բայց դա կարող է նաև պայմանավորված լինել նրանով, որ Որբունու առաջին սիրո՝ Գոհարիկի ազգանունը **Վարդերեսյան** է:

Դիտարկենք համապատասխան կերպարները: «Վարձու սենեակ» պատմվածքի գլխավոր հերոս Տիգրանի քրոջ անունը **Վարդանուշ** է, «Երբ գնացքները կուշանան» պատմվածքի գլխավոր հերոս Գարեգինի դեռահաս աղջկա անունը՝ **Վարդուհի**: «Փորձը» վեպում Մինասի չամուսնացած քրոջ անունը **Շուշան** է: Շուշանը սպիտակ ծաղիկ է, իսկ համանուն հերոսուհուն նրա սիրած տղան ամեն օր մեկ հատ սպիտակ վարդ էր նվիրում³⁶¹: Սպիտակ գույնով ընդգծվում է աղջկա անաղարտությունը: «Եվ եղև մարդ» վեպում Թոմասի դայակը՝ **օր. Նվարդը**, բավականին հմայիչ աղջիկ է նկարագրվում, և մանկան հոգում նրա հանդեպ նույնիսկ առաջ են գալիս թաքուն մղումներ³⁶²: «Սովորական օր մը» վեպում որպես երկրորդական կերպար հանդես է գալիս **Նվարդ** անունով աղջիկ, որի կերպարին Որբունին ծրագրել էր անդրադառնալ նույնիսկ առանձին

³⁵⁸ Նույն տեղում, էջ 126:

³⁵⁹ Նույն տեղում, էջ 188:

³⁶⁰ Տե՛ս **Որբունի 2.Մ.**, Եվ եղև մարդ, էջ 77:

³⁶¹ Տե՛ս **Ֆրոյդ 2.**, Հոգեվերլուծության ներածություն, Երևան, «Զանգակ» հրատ., 2002, էջ

³⁶² Տե՛ս **Որբունի 2.Մ.**, Եվ եղև մարդ, էջ 178:

վեպով («Նուարդ» վեպը պետք է լիներ «Հալածուածները» վիպաշարի հերթական հատորը): Սակայն ամենից ուշագրավը վիպաշարի Նվարդի **Վարդավառյան** ազգանունն է, քանի որ համանուն տոնը նվիրված է սիրո աստվածուհուն: Նույն վեպում կա Աշխեն անունով օրիորդ, որը, որպես հարմանու, մրցակից է Նվարդ Վարդավառյանին: Հարկ է նկատել, որ Աշխենի կրտսեր քույրերի՝ երկվորյակ **Սյուզանի ու Վիոլեթի** անուններն էլ են ծաղկանուններ: Մի դիպվածով Մինասը խոսում է Դանայան կույսերի մասին, իսկ աղջիկների ծնողները թյուրիմացաբար շրջվում են, նայում իրենց երեք կույսերին³⁶³: Սակայն հեղինակի երկերում երկու կույսի կերպար կա, որոնց անունները ո՛չ սրբերի անուններ են, ո՛չ էլ ծաղկանուններ: Դրանք են՝ «Խօսակցութիւն սափրիչի կրպակին մեջ» պատմվածքի **Թագուհին** և «Հալածուածները» վիպաշարի **Աշխենը**, որոնց անունները նույնիմաստ են, քանի որ **Աշխեն** ստուգաբանորեն նշանակում է **«իշխանուհի, թագուհի»** (հատ. Ա): Երկուսն էլ չափազանց տիրական են իրենց եռթյամբ, որի համար էլ ստացել են համապատասխան անուններ:

1.5. Սեռային պատկանելություն մատնանշող անուններ: Որքունու ստեղծագործությունների հիմնաթեման սեռի հարցն է, և գրողն իր երկերում կիրառել է արական ու իգական սկիզբ մատնանշող մի շարք խորհրդանիշներ, որոնցով գեղարվեստականորեն վերարտադրել է կին-տղամարդ հարաբերությունները: Նկատելի է, որ նույն օրինաչափությամբ իր շատ կերպարների համար ընտրել է այնպիսի անուններ, որոնք ուղղակիորեն **մատնանշեն կերպարների սեռային պատկանելությունը**: Օրինակ՝ **Արսեն** («Հուղարկավորութիւն») նշանակում է գնդ. «այր, տղամարդ» (հատ. Ա), **Արշավիր** («Երեւանցիին լացը»)՝ հուն. «այր մարդ» (հատ. Ա), **Աբգար** («Խօսակցութիւն սափրիչի կրպակին մեջ»)՝ ըստ հորենացու՝ հայ. «ավագ այր» (հատ. Ա), **Անդրե** («Խխունջը»)՝ հուն. «մարդ» (հատ. Ա):

Որքունին ստեղծել է մոտավորապես տասը կերպար, որոնց անվանել է **«Մարի»**: «Մարի» անունը տարածված է ամբողջ աշխարհում և ունի նաև «կին», «մայր» նշանակությունը (հատ. Գ) : Հայերենում «մարի» նշանակում է նաև «եգ թռչուն», և կարծում ենք՝ **հեղինակը կերպարների իգությունն ընդգծելու միտումով է անունն ընտրել**: Հենց իր առաջին պատմվածքում («Մառի»³⁶⁴) գրողը, ծննդավայր Օրդուի կամ Պուլսի՝ իր դպրոցական սերը պատկերելով, իր հետ նույնացող կերպարին անվանում է **Արման**, իսկ սիրած աղջկա՝ Գոհարիկ Վարդերեսյանի կամ Հերմիների հետ նույնացող կերպարին՝ **Մարի**: «Արման» նշանակում է կարոտ (հատ. Ա), և գուցե կապված է սփյուռքահայ գրողի կարոտի հետ, իսկ աղջկա անունը՝ հավանաբար «Մարի» անվան «կին, աղջիկ» իմաստի հետ:

Դիտարկենք «Խխունջը» պատմվածքի **Մարի** անունով հերոսուհուն, որը **մայրության մարմնացում** է, իսկ խխունջը՝ որպես պատյան, գոգավորություն ունեցող կենդանի, համարվում է ծոցավոր կնոջ խորհրդանիշ: Մի տղամարդ Մարիին առաջարկում է ամուսնանալ, հայրություն անել նրա երեխային, սակայն Մարին հայտարարում է, որ իր երեխային հայր պետք չէ, քանի որ այդ-հայրը սոսկ պատահար է, պատճառ, որի միջոցով կինը հասնում է մայրանալու գերնպատակին: Մարիի անունը միանշանակ այստեղ ընտրված է «կին, մայր» իմաստով : Պատահական չէ նաև զավակի Անդրե անունը, քանի որ հուն. «անդրոս» նշանակում է «մարդ» (տե՛ս «Անդրանիկոս», հատ. Ա): Համաձայն սույն պատմվածքի գաղափարաբանության՝ կինն է մարդ ստեղծում, իսկ տղամարդը սոսկ միջոց է:

³⁶³ Տե՛ս **Որքունի 2.Մ.**, Հալածուածները. Սովորական օր մը, Պեյրուբ, «Սեան» տպարան, 1974, էջ 115:

³⁶⁴ Տե՛ս **Որքունի 2.**, Մառի // «Նոր հաւատք», Փարիզ, 1924, թ. 1, էջ 23-27:

Ուշագրավ է, որ բացի «Մամի» պատմվածքի հայազգի հերոսուհուց, մյուս բոլոր Մարիները օտարազգի կանայք են, որոնք ունեն կնոջական դավադիր, առեղծվածային եություն, ինչպես օրինակ՝ «խխունջը» պատմվածքի **Մարին**, որը տղամարդուն օգտագործում է մայրանալու համար, «Եվ եղև մարդ» վեպի ֆրանսուհի **Մարի-ժոզեթը**, որը խելքից հանում է Թոմասին և հետապնդում նրան անգամ մահից հետո, «Գործագուրկ մը» պատմվածքի տիկին **Մանունլեսթեն**, որը վավաշոտ ցանկություններ է դրսևորում ամուսնու ընկերոջ նկատմամբ և իր անունով ասես զուգորդվում Մանոն Լեսկոյի («Մանոն» անունը Մարի անվան փաղաքական ձևն է) կերպարին:

Օտարազգի կանանց ազատ, հեղիեղուկ ու դավադիր եությունը Որբունին մշտապես զուգորդում է ծովի հետ: Ուսումնասիրելով Որբունու արձակի խորհրդանշային համակարգը՝ ծովն արդեն դիտարկել ենք որպես այլազգի ազատամիտ կնոջ խորհրդանշ³⁶⁵: Հարկ է նշել, որ լատիներեն «mare» արմատը նշանակում է «ծով», այստեղից էլ լատ. «marinus», անգլ. «marine» բառերը (տե՛ս «Մարինոս», հատ. Գ), որոնք նշանակում են «ծովային, ծովի հետ կապված»: Հետևաբար պատահական չէ, որ **ծովի հետ զուգորդվող այլազգի կանանց անունները ստուգաբանորեն նշանակում են «ծով**: Կնոջ՝ ծովի հետ զուգորդման լավագույն օրինակներից է «Գոհարիկ» պատմվածքի ֆրանսուհի **ժորժեթ Մարինիեի** կերպարը, որի ազգանվան մեջ էլ կա «ծով» արմատը: Ժորժեթն անընդհատ նույնանում է ծովի հետ: Իր ամուսնու գործուղման ընթացքում ծովափին հանգստանում է՝ սպասելով սիրելեանին՝ Որբունուն: Վերջինս, նրան տեսնելով, բացականչում է. «Ու ահա ժորժեթը: Վերջակետ: Ծո՛վ, ծով անանցանելի»³⁶⁶:

Ֆրանսուհիների անվան հետ կապված ևս մեկ օրինաչափություն կա, որը հարկ է ընդգծել. մեծ մասամբ նրանց **անունները սկսվում են «ժ» տառով (ժորժեթ** («Գոհարիկ»), **ժանեթ** («Տիտղոսի արձանը»), **ժերմեն** («Անձրեւոտ օրեր»), **Մարի-ժոզեթ** («Եվ եղև մարդ»)): Առհասարակ, ֆրանսիական իրականության մեջ «ժ» տառով սկսվող անունները տիպական են: Հիշենք, որ շահնուրյան **Նենեթի** իրական անունն էլ **ժան** է: «Նենեթ» նրան տրված փաղաքական անունն է, որով ընդգծվում է կերպարի իզուրությունը: Պատահական չէ, որ Պետրոսը, Նենեթի անունը զուգորդելով սեռային խորհրդանշի վերածված նշանավոր ֆրանսուհիների անունների հետ, **մ-ն տառերի բաղաձայնությ** է ստեղծում. «...միշտ նոյն Նենեթը՝ Մանուններու, Նիսուններու, Նանաներու թռռունկին»³⁶⁷: «ժ» տառով սկսվող անուններից բացի՝ Որբունու արձակում ֆրանսուհիների՝ «մ» և «ն» **տառերով սկսվող անունները** (Մարի անունով մի շարք հերոսուհիներ, վիպաշարի ֆրանսուհի քույրեր՝ Մոնիք և Նիքո) **ընտրված են՝ ընդգծելու անվանակիրների իզուրությունը, հեշտասիրությունը**:

1.6. Ազգություն մատնաշող անուններ: Կարելի է առանձնացնել նաև **անունների այնպիսի խումբ, որում դրանք ուղղակի մատնանշում են կերպարների ազգությունը՝ հիմնականում հայությունը**: Միայն մի անավարտ վեպում ներկայացվում է հայի հետ ամուսնացած ֆրանսուհի տիկին, որի «Ֆրանսուազ» (Francoise) անունը նշանակում է «ֆրանսիացի»³⁶⁸: Հայությունը մատնաշող անուններից շատ են հանդիպում **Արմեն** և **Արամ** անունները: Օրինակ՝ «Ապուլը» պատմվածքում՝ հայ գաղթական **Արմենակը**, «Անձրեւոտ օրեր» պատմվածքում՝ հայազգի փեսա պարոն **Արմենյանը**, «Եվ եղև մարդ» վեպում՝ ընտանիքի հայր պարոն **Արամը**, որին սպանել են Եղեռնի ժամանակ և այլք: Կյանքի վերջին տարիներին «Չի քո է կարողութիւն» վեպը գրելիս Որբունին շփոթմամբ նախորդ հատորներում **Արամ** անունով կոչած կերպարին անվանում է **Արմեն**, միևնույն

³⁶⁵ Տե՛ս **Միկոյան Ա.**, Ֆրոյդյան երազների սիմվոլները Չարեհ Որբունու արձակում // «Վեմ», Երևան, 2020, տարի 12, հունվար-մարտ, թ. 1(69), էջ 112-113:

³⁶⁶ **Որբունի Զ.**, Պատմուածքներ, Պէրյուք, «Սեւան» տպարարան, 1966, էջ 29:

³⁶⁷ **Շահնուր Շ.**, Երկեր, Եր., հատ. Ա, «Ազգ» հրատ., 2016, էջ 106:

³⁶⁸ Տե՛ս **Hanks P., Hodges F.**, A dictionary of first names.:

Նախորդ հատորներում հեղինակի կողմից Արմեն էր անվանվում Արամի կնոջ եղբայրը³⁶⁹: Այս վրիպումը ցույց է տալիս, որ Արմեն և Արամ անունները հեղինակի համար նույնարժեք են:

Յայ գաղթական կերպարներից շատերին հայոց թագավորների ու թագուհիների անուններով կոչելը և կերպարների ազգությունը ընդգծելու միտումով է: Այդպիսիք են, օրինակ, «Վարձու սենեակ» պատմվածքի և համանուն վեպի **Տիգրանը**, «Գործազուրկ մը» պատմվածքի **Աշոտը**, «Նսուսակցութիւն սափրիչի կրպակին մէջ» պատմվածքի **Արշակն** ու նրա որդի **Աբգարը**, «Անձրեւոտ օրեր» պատմվածքի Արմտիքյան ընտանիքի ներկայացուցիչներ **Տիգրանը**, **Չապելը**, ընտանիքի ընկեր **Երվանդը** և այլն: Յայոց թագավորների անունները խորհրդանշում են ուժացման մատնված սփյուռքահայերի ազգային ինքնագիտակցությունը: Այս առումով առավել ակնհայտ ակնարկ կա «Վարձու սենեակ» վեպի **Տիգրանի** վերաբերյալ. «... Ես՝ Տիգրան Տիգրանեան, որդի՝ ազգիս զոհուած Գարեգին Տիգրանեանի, ժառանգորդ՝ Սեւ ծովու եզերքը հաստատուած Անիէն գաղթած հայերու, ես, որդին անոր, գաղթած Միջերկրականի եզերքը»³⁷⁰: Սև և Միջերկրական ծովերի նշումով ասես ակնարկվում է Տիգրան Մեծի օրոք հաստատված Ծովից ծով Յայաստանը: Բացի այդ, հերոսն իր ծագումով նույնանում է Որբունու հետ, քանի որ վերջինս ծնվել է Սև ծովի ափին գտնվող Օրդու քաղաքում, բայց նախնիները Անիի Բագրատունիների շառավիղներից են, իսկ Եղեռնից հետո Որբունին գաղթել է Ֆրանսիա՝ հաստատվելով Միջերկրականի ափին գտնվող Մարսել քաղաքում: Ուշագրավ է «Եվ եղև մարդ» վեպի **Փառանձեմի** կերպարը: Նա Եղեռնի ժամանակ ամուսնուն կորցնում է, բայց կարողանում է երեխաներին փրկել: Ընտանիքում ստանձնում է հանգուցյալ ամուսնու պաշտոնը, և ինչպես մի առիթով նրա ավագ որդին է ասում, Փառանձեմն ամուսնու մահից հետո ասես դադարել էր կին լինելուց³⁷¹: Կարծում ենք, որ կերպարի անվան ընտրությունը կապված է Փառանձեմ թագուհու անվան հետ, որը ևս ամուսնու բացակայության ժամանակ արժանապատվորեն փոխարինեց նրան և տիրություն արեց որբացած ժողովրդին:

1.7. Ծագում-սերում մատնանշող անուններ: Անունների պես բազմաշերտ ու բազմախորհուրդ է նաև **Որբունու կերպարների ազգանունների պոետիկան:** Ազգանուններից մի քանիսը հորինված են՝ փոխաբերաբար մատնանշելու **տվյալ կերպարի կամ ընտանիքի ծագումը:** Օրինակ՝ «Անձրեւոտ օրեր» պատմվածքում Եղեռնից մագապուրծ եղած և Ֆրանսիա գաղթած ընտանիքի **Արմտիքյան** ազգանունը, որը հորինված է ընդգծելու ավանդապաշտ հայ ընտանիքի՝ արմատներից կառչած լինելը: Այս ընտանիքի կրտսեր դուստրը՝ Վարսենիկը, այնպիսի մոլեգին սիրով է սիրում Եղեռնագարկ հորը, որ ամուսնանալուց հետո անգամ ամուսնու Արմենյան ազգանվամբ ստորագրվելը համարում է հոր հիշատակի ունահարում: Իսկ պրն. **Արմենյանի** ազգանունը մատնանշում է կերպարի ազգությունը:

Իսկ «Յալածուածները» վիպաշարի **Ամիրյանները** վիպական գործողություններում ի սկզբանե դրսևորում են իշխելու, թելադրելու հակում: Այստեղից էլ Ամիրյան («ամիրա»՝ իշխան) ազգանունը: Ընդ որում, ինչպես արդեն նշվել է, Աշխեն նշանակում է իշխանուհի, հետևաբար Աշխեն Ամիրյան, ասել է, թե՛ «Իշխանուհի Իշխանյան»: Վիպաշարի մեկ այլ հատորում հեղինակն ազգանվան ընտրության մեկ այլ հիմնավորում է տալիս՝ Ամիրյանների ծագումը կապելով Բագրատունյաց տոհմի հետ³⁷², որից էլ բխեցնում է նրանց իշխելու մոլուցքը:

³⁶⁹ Այս մասին առավել հանգամանորեն տե՛ս **Որբունի 2.**, Չի քո է կարողություն, էջ 43-44:

³⁷⁰ **Որբունի 2.**, Վարձու սենեակ // «Կայք», Փարիզ, 1993, թ. 3, էջ 50:

³⁷¹ Տե՛ս **Որբունի 2.**, Եվ եղև մարդ, էջ 125:

³⁷² Տե՛ս **Որբունի 2.**, Յալածուածները. Սովորական օր մը, էջ 65:

1.8. Գործողություն կամ հատկանիշ մատնանշող ազգանուններ: Կան ընտանիքներ կամ հերոսներ, որոնց **ազգանունները մատնաշում են նրանց էությունը, բնավորության ամենահատկանշական գիծը:** Վիպաշարի գլխավոր հերոսի՝ Մինասի ազգանունը **Երազյան** է, քանի որ ի սկզբանե դրսևորել է երազկոտ բնավորություն, որի համար մշտապես քննադատվել է հենց իր ընտանիքի անդամների կողմից. «Եթե երազատես չես բան մը չես կրնար ընել: Վա՛յ երազ չունեցողներուն: Եղած տեղերին կը մնան: -Բայց ինչո՞վ տղաս, երազն ալ դրամով կ'ըլլաս»³⁷³:

Վարոյանների ընտանիքին իր կազմով, ընտանիքի անդամների միջև հարաբերություններով նույնանում է Որբունու ընտանիքին և վիպական Երազյաններին: **Վարոյանների որդի Մանուկը** Որբունու անձի հետ լիովին կամ մասմաբ նույնացող մնացած կերպարների պես ունեցել է Եդիպյան բարոյաթը հաղթահարելու, ինչպես նաև սոցիալապես կայանալու և հոգեպես ինքնուրույնանալու խնդիր: Մանուկը սկզբում սևեռուն սիրով սիրել և կապված է եղել մորը, այնուհետև այդ կապվածությունն անդրադարձրել է քրոջ վրա: Միայն հասուն տարիքում Երազյանների Շուշանին սիրահարվելով է կարողացել հաղթահարել իր ընտանիքի կանանց հետ երեխայական կապվածությունը: «Վարոս» նշանակում է «ծռած, կորցրած» (հատ. Ե): Մանուկը արտաքնապես պատկերվում է շեղ բերանով ու աչքերով: Ըստ երևույթին, հեղինակը Վարոյան ազգանունն ընտրել է թե՛ հերոսի արտաքին թերությունները, թե՛ հոգեկան շեղումներն ընդգծելու համար. «... շեղ աչքերով շիւ-շիւ նայելով մեր քոյրերուն՝ կը մեծնայինք, մարդ կը դառնայինք, բայց թուրքը գլխատեց մեր մանկութիւնը. . . .»³⁷⁴:

Մանուկից բացի, Որբունու արձակում հոգեբանորեն մանուկ մնացած ևս մեկ կերպար կա՝ **Խաչիկ Մանուկյանը** («Ասֆալթը»), որի բնավորության կենտրոնական գիծը խտացված է հեղինակի ազգանվան մեջ: Խաչիկ Մանուկյանը «Աղվոր մարդ մը» պատմվածքի **Խաչիկ Աթանեսյանն** է: Երկու կերպարների նախատիպն էլ Որբունու սիրելի ընկեր, ֆրանսահայ գրող **Խաչիկ Զուֆայանն** է, որի սպանությունը Որբունին շատ ծանր է տարել և հոգին պարպելու համար որոշել գրել դրա մասին³⁷⁵: Սկզբում ըստ երևույթին համարձակություն չգտնելով՝ գրել է «Աղուոր մարդ մը» պատմվածքը³⁷⁶, անդրադառնալով Խաչիկի «մանկունակ» բնավորությանը, ոչ թե սպանության դիպվածին և հերոսի ազգանունը դրել է «Աթանեսյան», որը **Նշանակում է «անմահ»** (տե՛ս «Աթանես», հատ. Ա): Իսկ տարիներ հետո գրված «Ասֆալթը» վեպում ներկայացրել է միայն Խաչիկի սպանության դիպվածը³⁷⁷ և ազգանունը դրել «Մանուկյան»: Խաչիկի կերպարը ներկայացնող երկու հերոսների ազգանուններն էլ խորհրդանշական են առաջինը հակառակ իմաստով ակնարկում է Խաչիկի ողբերգական մահվան դիպվածը և մատնանշում հեղինակի հոգում առաջ եկած դիմադրությունը սիրելի ընկերոջ կորստի համար, իսկ երկրորդը ընդգծում է կերպարի երեխայական էությունը: Հերոսի բնույթը մատնանշելու առումով ուշագրավ է նաև «Ապուշը» պատմվածքի գլխավոր հերոս Արմենակի **Սալոյան** ազգանունը: Արմենակը հոգու խորքում փափագում է սիրային կապի մեջ մտնել հասուն տարիքի ֆրանսուհու՝ տիկին Պռնայի հետ, սակայն բավականաչափ համարձակություն չգտնելով՝ փախչում է կնոջ տնից և փոշմանում: Դառնացած կինը նրան ապուշ է անվանում: **Եվ իրապես իր ապուշության, անճարակության համար է կերպարը ստացել Սալոյան ազգանունը (օր.՝**

³⁷³ Նույն տեղը, էջ 173:

³⁷⁴ **Որբունի 2.**, Չի բո է կարողություն, էջ 56:

³⁷⁵ Տե՛ս **Որբունի 2.**, Օրագիր // «Սփիւռք», Պեյրուպ, 1959, թ. 33, էջ 4:

³⁷⁶ Տե՛ս **Որբունի 2.**, Անձրեւտ օրեր, էջ 59-79:

³⁷⁷ Տե՛ս **Որբունի 2.**, Հալածուածները. Ասֆալթը, էջ 164:

ժողովրդական լեզվում «դամբուլ» (սալորի տեսակ) փոխաբերական իմաստով նշանակում է «անճարակ, անշնորհք, անմիտ»³⁷⁸:

Առանձին խոմբ են կազմում կերպարի **որևէ արարք, գործառույթ մատնանշելու համար ստեղծված ազգանունները**: Իսկ «Գործազուրկ մը» պատմվածքի հերոսի՝ **Աշոտ Նշանյանի** ազանունն ըստ եուլթյան նրա՝ գերիրապաշտ նկարիչ լինելու հետ է կապված:

Նույն տրամաբանությամբ են ընտրված նաև այլազգի որոշ կերպարների ազգանուններ: Դիտարկենք «Թեկնածուն» վեպի **Յորթանս Դետիեի** և «Ասֆայթը» վեպի **պարոն դը լա Ֆոսի** օրինակները: Յորթանսը հասուն տարիքի կին է, այն պանդոկի տիրուհին, որտեղ բնակվում են վեպի գլխավոր կերպարները՝ եղեռնազարկ հայ երիտասարդները: Յորթանսը փոքրամարմին, բայց ինքնավստահ կին է, որի հետ երիտասարդ ու անփորձ հայ գաղթական Մինասը սեռային կապի մեջ է մտնում: Մինասը նրա հանդեպ երախտագիտությամբ է լցվում, քանի որ այդ կինը իրեն շատ էր հասունացրել: Յերոսի բնորոշմամբ՝ Յորթանսին հաջողվել էր ջախջախել տղայի բարոյականները, քանի որ վերջինս երիտասարդի գրկում կարողանում էր փոքրանալ և այնպիսի դիրք գրավել, ասես երեխայի պես պաշտպանության կարիք ունի: Մինասը նրա մասին խոսելիս նշում է՝ «ատ պգտիկնալ գիտցող կինը», «մկնիկի պես կինը»: **Դետիե** ազգանունը ֆրանսերեն կգրվի «Pitié», որը թարգմանաբար նշանակում է «խղճմտանք, կարեկցանք»³⁷⁹: Հավանաբար Որբունին ազգանունը կապել է Յորթանսի՝ Մինասի գրկում պգտիկանալով անպաշտպան կեցվածք ընդունելու հետ կամ էլ կնոջ **փոքրակազմ լինելու (ֆր. «petite» փոքր)**: Իսկ գործարար դը լա Ֆոսը «Ասֆայթը» վեպի գլխավոր կերպարի՝ Նիթոլի աշխատանքային ղեկավարն է: Նա է կազմակերպում ծնողների վաղուց կորցրած, հայ անտուն ամուսնուց լքված Նիթոլի հուղարկավորությունը, որի ժամանակ արտասանում է դամբանական ճառ: «**Fosse**» նշանակում է «**փոս**»³⁸⁰, հետևաբար պարոնի ազգանվան ընտրությունը կապված է Նիթոլի հուղարկավորման դիպվածի հետ:

1.9. Հակառակ իմաստով որևէ բան խորհրդանշող անուններ: Կան անուններ ու ազգանուններ, որոնք ոչ թե ուղիղ, այլ հակառակ իմաստ ունեն խորհրդանշական կերպարների համար: Օրինակ՝ «Թեկնածուն» վեպում հյուրանոցի սրճարանում մատուցող աշխատող **Վանատուրի անունը**, որը, հակառակ իր անվան նշանակությանը, հյուրընկալ չի գտնվում դասընկերոջ հանդեպ³⁸¹: **Ֆրիդա** անվան մեջ հին բարձր գերմ. «fridu» (խաղաղություն, հաշտություն, պաշտպանություն գեներից) արմատն է³⁸², բայց Որբունու պատմվածքի Ֆրիդան գերիների ճամբարի հսկիչն է³⁸³, խաչիկ Չուֆայանը սպանվում է, բայց նրա համարժեք կերպարը անվանվում է Աթանեսյան (նշ. է «անմահ») և այլն:

Կարծում ենք, որ վերոնշյալ սկզբունքով է մտածված նաև «Հալածուածները» վիպաշարի գլխավոր կերպարի՝ **Նիթոլի** անունը: Նախատիպը Որբունու կինն է, սակայն նկատելի է, որ Նիթոլի կերպարով հեղինակը փորձել է ստեղծել ֆրանսուհու հավաքական տիպ՝ խտացնելով նրա մեջ այն բոլոր հատկանիշները, որոնք խորթ են հայկական իրականությանը: Նիթոլն ունի **Մոնիք** անունով քույր, որն ասես նրա ես-ի մի բեկորը լինի, կրկնակը: «Նիթոլ» և «Մոնիք» անունները նույնարմատ են՝ «nike»-հաղթանակ (տե՛ս «Նիկողայոս», հատ. Դ, էջ 75), և մեկ հնչյունի (-մ) տարբերությամբ բոլոր հնչյունները

³⁷⁸ Տե՛ս **Աղայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., «Հայաստան» հրատ., 1976, հատ. 1:

³⁷⁹ Տե՛ս **Գասպարյան Ա.**, Ֆրանսերեն-հայերեն, հայերեն-ֆրանսերեն բառարան, Եր., «Արեգ» հրատ., 2013:

³⁸⁰ Նույն տեղում:

³⁸¹ Տե՛ս **Որբունի Զ.**, Հալածուածները. Թեկնածուն, էջ 53-54:

³⁸² Տե՛ս **Kohlheim R., Kohlheim V.**, Das grobe vornamen-lexikon:

³⁸³ Տե՛ս **Որբունի Զ.**, Պատմածքներ, էջ 81-94:

կրկնվում են անվան մեջ, սակայն հակառակ հերթականությամբ՝ ասես հայելաձև արտացոլմամբ (**Մ Ո Ն Ի Զ-Ն Ի Զ Ո Լ**): Այս կերպարները դրսևորում են նույնասեռական հակումներ: Գրողը մերժողական վերաբերմունք է դրսևորում քույրերի հանդեպ՝ որպես պատիժ երկուսի համար էլ սահմանելով մահացու հիվանդություն: Որբունին հավատում է, որ քույրերն իրենց ոչնչացմամբ պիտի ճանապարհ բացեն նոր ու առողջ հոգեբանությամբ սերունդի համար: Չնայած նրան, որ քույրերի անունները նշանակում են «հաղթանակ», նրանք կործանման մատնված տիպեր են:

2. Նախատիպերի անուն-ազգանունների հետ համընկնող գեղարվեստական անուն-ազգանուններ

Որբունու արձակի մի շարք կերպարներ նույնանուն են հեղինակի անձի հետ, բայց կրում են ուրիշ անուններ: Սակայն մի քանի գրվածքներում հեղինակի անձի հետ նույնացող կերպարներն անվանվում են կամ **Որբունի**, կամ **Չարեհ**: Միայն վիպաշարում է, որ հեղինակի անձի հետ նույնացող բանաստեղծ Մինասի կողքին ստեղծվում է նաև **Չարեհ Որբունի անունով գրողի կերպար**, որ ընթերցողը Մինասին ամբողջապես չնույնացնի հեղինակի հետ, հասկանա, որ Մինասը հեղինակի ես-ի ընդամենը մի բեկորն է, նրա բանաստեղծական ես-ը:

Գրողը հիմնականում **իր սիրելի կանանց է իրական անուններով պատկերում**: Օրինակ՝ **«Գոհարիկ»** պատմվածքի համանուն կերպարը: Բայց գրողի երկերի առանցքային կերպարը իր բազմամյա կինն է՝ **Էլիզաբեթ Յերը**, որը վիպաշարում ներկայացվում է Նիթլ անունով, իսկ մի շարք պատմվածքներում իր անվան կրճատ տարբերակներով՝ **Լիլի («Ժամադրավայր»), Լիզա («Մարդը՝ որ անցեալ չուներ»), Լիզեթ («Սև մագերթը»)** և այլն: Ուշագրավ է «Եվ եղև մարդ» վեպի **Յերմինեի** կերպարը, որը եղեռնից հետո Թոմասի հետ նույն ընտանիքի կողմից էր որդեգրվել, ապա բռնաբարվել թուրքի կողմից: Որբունին օրագրային էջերից մեկում անդրադարձ ունի պոլսեցի Յերմինեին՝ իր սիրած աղջկան, սակայն չի պարզաբանում իրական Յերմինեի հե՞տ էլ է նույն ընտանիքում որդեգրված եղել, թե՞ ոչ³⁸⁴: Բայց օրագրային մեկ այլ էջում պատմում է իր որդեգրության պատմությունը³⁸⁵: Պատանի հասակում Որբունին որդեգրվել է թուրքի՝ Ահմեդ բեյի կողմից, որը ցանկացել է իր աներորդու և «Տրապիզոնի նախկին մյուլթասարըֆ» **Չիա** փաշայի որդիների հետ Որբունուն ուղարկել Պոլիս՝ կրթության, սակայն վերջինս փախել է այդ տնից³⁸⁶: Բայց հետագայում «Թեկնածուն» վեպում գրողը ստեղծել Չիա անունով երիտասարդ թուրքի կերպար, որը հայերի ընկերությունը շատ է գնահատում և ուզում է առաջարկություն անել մի հայ աղջկա: Սակայն Վահագնին, որը, կոտորածի տարիներին որբանալով, որդեգրվել և սեռական բռնության էր ենթարկվել թուրք կնոջ կողմից, նույնացնում է իր խորթ մորը՝ Չիային, և իր մանկության վրեժն առնում Չիային խեղդամահ անելով:

Որոշ երկերում Որբունու ընտանիքի անդամներից ոմանց գեղարվեստական կերպարները հանդես են գալիս նախատիպերի անունների փոքր-ինչ փոփոխված տարբերակներով: Օրինակ՝ Որբունու **Մելանույշ** քույրը «Եվ եղև մարդ» վեպում **Սիրանույշ** անունով է ներկայացվում, վիպաշարում **Որբունու մոր՝ Արաքսիի գեղարվեստական համարժեքը** անվանված է **Արուսյակ**: Իրենց **իրական անուններով կամ ազգանուններով Որբունին գեղարվեստականացրել է նաև սփյուռքահայ մի քանի գրողների**: Որբունու ստեղծագործական նախաքայլերում մեծ դեր է խաղացել **Վահան Թեբեյանը**, քանի որ առաջին անգամ Թեբեյանն է իր «Ժողովրդի

³⁸⁴ Տե՛ս **Որբունի 2.**, Օրագիր // «Անի», Պեյրուպ, 1954, թ. 2, էջ 81-82:

³⁸⁵ Տե՛ս **Որբունի 2.**, Յալածուածները. Ասֆալթը, էջ 48-49:

³⁸⁶ Տե՛ս **Որբունի 2.**, Երազներու լեզուն // «Անի», Պեյրուպ, 1946, թ. 1, էջ 10:

ծայն» թերթում տպագրել Որբունու բանաստեղծությունը³⁸⁷: «Թեկնածուն» վեպում Մինասը՝ Որբունու բանաստեղծ ես-ը, Ֆրանսիայում հանդիպում է Թեթեյանին, մոտենում նրան՝ շնորհակալություն հայտնելու³⁸⁸: Վիպաշարի մեկ այլ վեպում էլ պոլսահայ գրող **Սատթեոս Չարիֆյանի** անունն է հիշատակվում: Պատանի Որբունին նրան շատ է հանդիպել Պոլսում, շփվել: Չարիֆյանը եղել է պատանի բանաստեղծի մեծագույն ներշնչանքը³⁸⁹: Իսկ ահա Որբունու սերնդակից ու գրչակից գրող **Վազգեն Շուշանյանի** կերպարը, կարծում ենք, արտացոլվել է **երեք կերպարներում**: Կյանքի վերջին տարում գրված «**Ժամադրավայր**» գրվածքում կա **հենց Վազգեն Շուշանյան անունով կերպար**³⁹⁰, իսկ վիպաշարի առաջին և երկրորդ վեպերում **Վազգեն անունով մի երիտասարդ հեղափոխական** կա, որի մասին խոսելիս հեղինակը խորհրդավոր կերպով օգտագործում է «**ներքին դաշտանկար**» արտահայտությունը³⁹¹, որը Շուշանյանի երկերից մեկի վերնագիրն է³⁹² և կարելի է ընդունել որպես ակնարկ: Բացի այդ, բավականին խոսուն ընդհանրություններ կան «**Թեկնածուն**» վեպի **Վահագնի ու Շուշանյանի** միջև: Երկուսն էլ Եղեռնի ժամանակ իրենց մայրերին կորցրել են և ամբողջ կյանքում այնքան են իդեալականացրել նրանց, որ անկարող են եղել ընտանիք կազմել: Երկուսն էլ ողջ կյանքում բանվորի աշխատանք են կատարել՝ վախճանվելով վաղաժամ³⁹³: Բայց ամենախոսուն փաստն այն է, որ «**Ժամադրավայր**» գրվածքում Վազգեն Շուշանյանը նույն մերժողական վերաբերմունքն է դրսևորում իր ընկերոջ ֆրանսուհի հարսնացուի նկատմամբ, ինչ «**Թեկնածուն**» վեպի Վահագնը իր ընկերոջ՝ Որբունու հետ նույնացող Մինասի սիրեցյալ Նիքոլի հանդեպ: Ուշարժան է, որ շահնուրյան **Չարեհն (Լոխումն)** էլ շատ ընդհանրություններ ունի Չարեհ Որբունու հետ: Որբունին էլ Լոխումի պես մենակ էր տեղափոխվել Ֆրանսիա, կարոտում էր մորը: Օրագրային էջերում գրողը պատկերում է իր ապրումները Պոլսից մոր գալստյան վերաբերյալ³⁹⁴: Որբունու դեպքում էլ հայրենիք վերադառնալը եղել է սևեռուն միտք, նույնիսկ նրա հերոսներից Տիգրանն է Լոխում-Չարեհի պես («**Անձրեւոտ օրեր**») ապրում հայրենիք վերադառնալու մարմաջով: Առհասարակ, անգամ շահնուրյան Չարեհի արտաքին նկարագրությունն³⁹⁵ է համապատասխանում երիտասարդ Որբունու նկարագրին³⁹⁶՝ կաթնաթույր մաշկով, բարակ բերանով, շիկավուն և ալիքավոր մազերով, սակայն տառապանքից գունատված, հյուժված դեմքով և ջղազար շարժումներով: Լոխումի պես Որբունին էլ է ողջ կյանքում գիտակցել մոր ներկայության կարևորությունն իր կյանքում: Նա այնքան է սիրել մորը, որ իր երկերի գրեթե բոլոր հերոսներին կերտել է Էդիայան բարդույթով:

Այսպիսով՝ Չարեհ Որբունու պոետիկայի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ կերպարները մեծամասամբ ունեն նախատիպեր, և հեղինակը կամ նախատիպերի

³⁸⁷ Տե՛ս **Որբունի 2.**, Գառնուկս // Ժողովրդի ծայնը, Կ. Պոլիս 1922, հուլիսի 23, էջ 1:

³⁸⁸ Տե՛ս **Որբունի 2.**, Չալածուածները. Թեկնածուն, էջ 118:

³⁸⁹ **Որբունի 2.**, Կենսագրական շաղակրատություն Գ. Մահարիի հետ, էջ 132:

³⁹⁰ Տե՛ս **Որբունի 2. Մ.**, Ժամադրավայր // Միտք եւ արուեստ. 1976-1987, խմբ.՝ Գրիգոր Պըլտեան, Երեւան., «Սարգիս Խաչենց», «Փրինթինֆո», «Անտարես» հրատ., 2018, էջ 203-205:

³⁹¹ Տե՛ս **Որբունի 2.**, Չալածուածները. Ասֆալթը, էջ 48-49:

³⁹² Տե՛ս **Շուշանյան Վ.**, Ներքին դաշտանկար, Երևան, Երևանի համալս. հրատ., 1995:

³⁹³ Վազգեն Շուշանյանի կյանքի մանրամասները տե՛ս **Սևան Գ.**, Վազգեն Շուշանյան. կյանքն ու ստեղծագործությունը, Երևան, Չայկական ՍՄՐ ԳԱ հրատ., 1968; **Շուշանյան Վ.**, Ալեկոծ տարիներ 1920-1932, Մոնթրեալ, 2014:

³⁹⁴ Տե՛ս **Որբունի 2.**, Օրագիր էջեր// Շիրակ, Պեյրուֆ, 1956, թ. 2, էջ 45:

³⁹⁵ Տե՛ս **Շահան Շ.**, Երկեր, Երևան, «Ազգ» հրատ., հտ. Ա, էջ 137-148:

³⁹⁶ 2. Որբունու կողմից իր երիտասարդության նկարագիրը տրվում է «Գոհարիկ» պատմվածքում՝ հեղինակի համանուն կերպարի կեցվածքի նկարագրությամբ. տե՛ս **Որբունի 2.**, Պատմվածքներ, էջ 9-14:

իրական անուններով է կոչում նրանց, կամ իրական անունը փոխարինում խորհրդանշական անուն-ազգանվամբ: Խորհրդանշական անունները, որոնք ուղիղ, փոխաբերական կամ հակառակ իմաստներով մատնանշում են հերոսների տիպը, գերակշռում են Որբունու արձակում: Կան անուն-ազգանուններ, որոնք մատնանշում են հերոսի ծագումը, կարգավիճակը, ազգությունը, բնավորությունը, գործունեությունը, հազվադեպ՝ արտաքինը: Սակայն խորհրդանշական անունների ծանրակշիռ մասը մատնանշում է կերպարի սեռային պատկանելությունը: Ընդ որում, հայ աղջիկների անուններն այնպես են ընտրված, որ մատնանշեն նրանց մաքուր, անպիղծ էությունը, և ի հակադրություն դրա՝ ֆրանսուհիների անուններն ընդգծում են անվանակիրների իզուրությունն ու վավաշոտությունը: Փաստորեն Որբունին իր կերպարների անունները դարձնում է յուրօրինակ նշաններ, որոնցով կողավորում-բանաձևում է իր ասեյիքը:

THE POETICS OF PROPER NAMES IN Z. VORBOUNI'S LITERARY WORKS

ANNA MIKOYAN

Yerevan State University,

Faculty of Armenian Philology,

Contemporary Armenian Literature Chair, Ph.D Student;

“Zangak” Publishing House, Methodologist,

Yerevan, Republic of Armenia

The purpose of this article is to highlight the approach that the study of the names and surnames of characters created by the author is central in the examination of the poetics of the French-Armenian writer Zareh Vorbouni and his literary works in general. Our main issue is to reveal author's speech with the help of proper names of fictional characters, which is skillfully encrypted in the names – surnames of characters. During the research the semantic method was mainly used; in some cases it was accompanied by hermeneutical-psychoanalytic approaches of reading the literary text. The research concluded that the names of the characters of Zareh Vorbouni were not selected accidentally; they either coincide with the prototype names and surnames, or are symbolic of a given character or literary works. The latter version dominates in the writer's works. There are names and surnames symbolizing the origin, sex, status, nationality, character, system of values, activities, and sometimes even appearance of heroes, each of which is an artistic key to penetrate the depth of the work.

Keywords: *Armenian literature of Diaspora, Z. Vorbouni, poetics, semiotics, proper names of fictional characters, symbols, prototypes.*

ПОЭТИКА СОБСТВЕННЫХ ИМЕН В ЛИТЕРАТУРНЫХ ПРОИЗВЕДЕНИЯХ З. ВОРБУНИ

АННА МИКОЯН

*аспирант кафедры современной армянской литературы
факультета армянской филологии*

Ереванского государственного университета;

методист издательства «Зангак»,

г. Ереван, Республика Армения

Цель данной статьи - отметить подход, согласно которому для изучения поэтического творчества французского писателя армянского происхождения Заре Ворбуни и литературоведческого прочтения его произведений в целом ключевым является изучение имен и фамилий созданных писателем персонажей. Наша задача заключается в том, чтобы с помощью имен собственных Ворбуни раскрыть авторские идеи, зашифрованные в именах и фамилиях его героев.

В ходе исследования использовался в основном семантический метод, в отдельных случаях он дополнялся герменевтически-психоаналитическим подходом к чтению художественного текста. В ходе исследования мы пришли к выводу, что имена персонажей Заре Ворбуни были выбраны не случайно: они либо совпадают с именами и фамилиями прототипа, либо являются символическим для данного персонажа или произведения, причем последнее в творчестве писателя доминирует. Так, есть имена и фамилии, символизирующие происхождение героя, пол, статус, национальность, характер, систему его нравственных ценностей, деятельность и иногда даже его внешний вид. Каждый тип имени собственного является художественным ключом, позволяющим проникнуть в глубину произведения автора.

Ключевые слова: *армянская литература диаспоры, З. Ворбуни, поэтика, семиотика, собственные имена художественных персонажей, символы, прототипы.*